



---

Գիմնագիայի տնօրենի ճառեր

---

Գեորգ Վիլիելմ Ֆրիդրիխ Հեգել



*Հատվածներ*

*Ռուսերենից ծաղկաքաղը և թագմանությունը՝ Աշոտ Տիգրանյանի*

# **Բովանդակություն**

## **Գիմնագիայի տնօրենի ճառերը**

### **Գիմնագիաներում իմաստասիրության դասավանդման մասին**

#### **Գիմնագիայի տնօրենի ճառերը**

*(հատվածներ)*

Այդ տարանջատման և սահմանափակման շնորհիվ նա (իմա՝ հին լեզուների ուսումնասիրությունը. Ա. Տ.) իր իրական տեղն ու ավելի ազատ և ավելի լիարժեք զարգանալու հնարավորություն ստացավ: Բնահատուկ համակարգի ազատության և ուժի անեղծ հատկանիշն այն է, որ այնտեղ պարփակվող տարբեր կողմերն ինքնախորանում են, դառնում ինքնուրույն, յուրաքանչյուրն առանց նախանձի և սարսափի անում է իր գործը, տեսնում մյուսների հաջողությունները, ընդ որում նրանք բոլորն ընդամենը մի մեծ ամբողջության մասերն են:

Միայն այն, ինչն իր առանձնության մեջ հանգում է իր սկզբունքի կատարելությանը, դառնում է հետևողական ամբողջական, այսինքն՝ նրանից ստացվում է **ինչ-որ որոշակի բան**. վերջինս խորություն և բազմակողմանիության գործուն հնարավորություն է ձեռք բերում: Միակողմանիության անհանգստությունն ու վախը չափազանց հաճախ հատկանիշն են թուլության, որը միայն բազմակողմանի անհետևողական մակերեսայնության է ընդունակ:

Եվ եթե հիմա, ինչպես նախկինում, հին լեզուների ուսումնասիրությունը մնում է գիտական կրթության հիմքը, ապա ներկա սահմանափակման պայմաններում նույնպես կարևոր գործառույթ ունի: Որևէ ժողովրդի մշակույթը, արվեստը և գիտությունը ոտքի կանգնեցնելը, անկասկած, արդար պահանջ է: Ինչ վերաբերում է նոր աշխարհի կրթությանը, մեր լուսավորությանը, բոլոր արվեստների և գիտությունների հաջողություններին, կարո՞ղ ենք արդյոք հաշվի չառնել, որ այլևս նրանց հազով չեն Հունաստանի ու Հռոմի մանկական կոշիկները, շատ մեծ են արդեն նախկին սատարման համար և կարող են սեփական հիմքի վրա հենվել: Թող որ հենքի

ստեղծագործություններում միշտ կմնա մեծ թե փոքր արժեք, բայց հարկ է, որ նրանք անցնենին հուշերի, գիտության տոնական արժանիքների ոլորտը, միայն պատմականի դասին դասվենին, որը կարելի է ընդունել կամ չընդունել, բայց որն ինքնին չի կարող մեր ոգու ավելի բարձր կացության հիմքն ու ակունքը կազմել:

Սակայն եթե ընդունենք, որ ընդհանրապես կատարյալից պետք է ելնել, ապա ավելի բարձր կրթության համար առավելապես հույների գրականությունը պետք է հիմք լինի ու մնա և հետո՝ հռոմեացիների: Այդ գլուխգործոցների կատարելությունն ու շքեղությունը պետք է հոգուն ճաշակի ու գիտության առաջին ու հավերժ մնայուն հիմնական երազներն ու գույները տվող հոգևոր մկրտության ավագան, աշխարհիկ կնունք դառնան: Այդպիսի ընծայման համար անբավարար է հների հետ ընդհանուր արտաքին ծանոթությունը, պետք է համամարմնավորվենք նրանց հետ, ընկալենք նրանց օղը, նրանց պատկերացումները, նրանց բարքերը և նույնիսկ, եթե հաճո է, նրանց մոլորություններն ու նախապաշարմունքները, այդ աշխարհում զգանք ինչպես տանը՝ մեր եղած տներից լավագույնում: Եթե առաջին դրախտը **մարդկային բնույթի** դրախտն էր, ապա սա՝ երկրորդը, **մարդկային ոգու**, որն իր հիասքանչ բնականությամբ, ազատությամբ, խորությամբ և կենսուրախությամբ ներկայանում է, ինչպես հարսնացուն իր լուսասենյակից: Հորիզոնում նրա հայտնվելու առաջին մոլեգին պերճությունը ձևի թովչանքով է հաղորդված և գեղեցկությամբ սանձահարված. նրա խորությունը ոչ թե խրթինությունը, վիատությունը կամ ամբարտավանությունն է, այլ անբռնազբոս պարզությունը, նրա զվարթությունը մանկական խաղ չէ, այն ծավալվում է թախծի վրա, գիտի ճակատագրի ծանրությունը, բայց դրանից դուրս չի մղվում ճակատագրից վեր ազատ ճախրանքից և չափի իմացությունից: Ինձ թվում է, որ ես շատ չեմ չափազանցնի, եթե ասեմ, որ նա, ով չի իմացել հների ստեղծագործությունները, գեղեցիկը չճանաչելով է ապրել:

Եվ, ահա, կրթության այս տարրում, շնորհիվ նրա, որ ներծծել ենք հին մշակույթը, ոչ միայն հոգու բոլոր ուժերն են շարժման մեջ դրվում, զարգանում և վարժվում, այլև հենց ինքը (իմա՝ հին մշակույթը. Ա.Տ.) ներկայանում է որպես **յուրօրինակ նյութ**, որի շնորհիվ հարստանում ենք և մեզ համար լավագույն սուբստանցիա (անփոփոխ էություն. Ա. Տ) նախապատրաստում:

Ինչպես ասվել է, **ոգու գործունեությունը** կարող է **ցանկացած նյութով** մարզվել, և ամենանպատակահարմարը համարվել են մասամբ արտաքուստ օգտակար, մասամբ զգայական առարկաները, որոնք պատանեկան և մանկական տարիքի համար ըստ էության ամենահարմարն են, քանի որ վերաբերում են ինքնին այդ տարիքին հատուկ պատկերացումների շրջանակին և տեսակին:

Եթե նույնիսկ վարժանքն առանձնացված է իրեն վերաբերող առարկաների շրջանակից, եթե նույնիսկ չի կապվում այդ շրջանակին (ինչպես հնարավոր է, որ ողջ ձևականն է զատված մատերիայից, իսկ հնարավոր է, որ դա այդպես չէ), ապա չէ՞ որ խոսքը բնավ միայն վարժանքի մասին չէ: Ինչպես բույսն է լույսով ու օդով ոչ թե պարզապես վերարտադրության իր ուժերը վարժում, այլն միաժամանակ այդ գործընթացում սնունդ ներծծում, այնպես էլ նյութը, որով բանականությունն ու ընդհանրապես հոգու ունակություններն են զարգանում ու վարժվում, միաժամանակ այդպիսի սնունդ պետք է լինի: Դա այն, այսպես կոչված օգտակար, զգայական նյութը չէ, որն անմիջականորեն պորտալարից է տրվում երեխայի պատկերացումների շրջանակ. միայն ինքնին արժեք ու նշանակություն ունեցող հոգևոր բովանդակությունն է ամրացնում հոգին և այնպիսի անմիջական հենարան ստեղծում, այնպիսի **սուբստանցիալ միջուկ**, որը ոգու ինքնատիրապետման, ողջամտության, ոգու ներկայության և արթնության մայրն է, դա իրենով սնուցված հոգին ինքնուրույն արժեք, բացարձակ նպատակ ունեցող էության է վերածում, միայն դա է կազմում հանընդհանուր պիտանիության հիմքը, և բոլոր դասերում դա պետք է ամբարել: Մի՞ թե վերջին ժամանակներս չենք տեսել նույնիսկ ամբողջ պետություններ, որոնք ուշադրություն չեն դարձրել և քամահրել են իրենց հպատակների հոգիներում այդպիսի ներքին հիմք ստեղծելու և զարգացնելու անհրաժեշտությունը, նրանց դեպի գուտ օգտակարություն են ուղղորդել, իսկ հոգևորը համարել են միայն միջոց. հենարան չունենալով՝ նրանք փլուզման վտանգի առջև են՝ իրենց բազում օգտակար կարողություններով հանդերձ:

Եվ, ահա, ամենաընտիր սնուցող նյութը ամենաընտիր ձևով՝ ոսկե խնձորները արծաթե սկահներում, հների ստեղծագործություններում անհամեմատ ավելի մեծ չափով է պարունակվում, քան որևէ ժամանակի և ազգի ցանկացած այլ ստեղծագործություններում: Բավական է հիշեցնեմ միայն նրանց մտածելակերպի վեհության, բարոյական որևէ երկիմաստությունից ազատ գեղակերպ առաքինության և հայրենասիրության մասին, նրանց գործերի ու բնավորությունների վսեմության, ճակատագրերի, սովորությունների և ոգու հակվածության բազմակերպության մասին, որպեսզի արդարացնեմ այն պնդումը, որ կրթության ոչ մի նյութում այդքան շատ հրաշալիություն, արտասովորություն, յուրօրինակություն, բազմակողմանիություն և ուսանելիություն միավորված չէ:

Մինչդեռ այդ հարստությունը կապված է **լեզվի** հետ, և միայն նրա շնորհիվ ու նրանով կարող ենք հասու լինել դրան (իմա՝ հների ստեղծագործությունների հարստությանը. Ա. Տ.)՝ իր ողջ յուրատեսակությամբ: Թարգմանությունները բովանդակությունն են հաղորդում, բայց ոչ ձևը, ոչ նրա նրբագույն հոգին: Նրանք արհեստական վարդի նման են, որ ձևով, գույնով, գուցե նաև հոտով կարող են բնականի նման լինել, բայց չունեն իսկականի հաճելիությունը, նրբությունը և քնքշությունը: Եվ ընդհանրապես

ընդօրինակության պաճուճագեղությունն ու նրբագեղությունը միայն իրեն են հատուկ, և նրանում իրեն զգալ է տալիս բովանդակության և այդ բովանդակության հետ միասին չաճած ձևի հակադրությունը: Լեզուն երաժշտական տարերք է, թարգմանություններում անհետացող սրտառուչության տարերք, նուրբ բույր է, որի շնորհիվ կարելի է վայելել հոգու համակրանքը, և առանց նրա ստեղծագործությունը նույնն է, ինչ որակը կորցրած հռենոսյան գինին:

Այդ հանգամանքը հների լեզուները հիմնավորապես ուսումնասիրելու, դրանց տիրապետելու ծանր թվացող անհրաժեշտություն է պարտադրում մեզ, որպեսզի ստեղծագործություններն իրենց բոլոր կողմերի և առավելությունների հնարավոր ամբողջությամբ վայելելու հնարավորություն ունենանք: Եվ եթե սկսեինք տրտնջալ այն ջանքերի համար, որ անհրաժեշտ է գործադրել այդ (իմա՝ հների լեզուները սովորելու Մ. Տ.) նպատակով, վախենալ կամ զոջալ, որ այդ պատճառով ստիպված ենք հետին պլանում թողնել այլ գիտելիքների և հմտությունների ձեռքբերումը, ապա պետք է գանգատվեինք ճակատագրից, որն այդ դասական ստեղծագործությունները մեզ մեր մայրենի լեզվով չի տվել, որը դժվարին ճանապարհորդությունը դեպի հին աշխարհ ավելորդ կդարձներ և այդ արժեքներին փոխարինող կտար մեզ:

Կրթության **նյութի** մասին ասվածից հետո կցանկանայի ևս մի քանի բառ ասել այդ նյութի բնույթում պարունակվող **ձևականի** մասին:

Բանն այն է, որ կրթության առաջընթացը չի կարելի դիտարկել որպես բնականոն ավելացում մի շղթայի, որում հաջորդ օղակները նախորդներին միացված են վերջիններիս հաշվառմամբ, բայց պատրաստված են այլ նյութից, ընդ որում հաջորդ աշխատանքը չի հակասում նախորդին: Իսկ կրթությունը պետք է ունենա նախկին նյութն ու առարկան, որի վրա աշխատում է, այն փոփոխում ու վերստին կազմավորում:

Անհրաժեշտ է անտիկ աշխարհն ուսումնասիրել այնպես, որպեսզի գիտենանք այն և ավելին՝ ունենանք այն, որպես մի բան, ինչի վրա աշխատում ենք: Իսկ որպեսզի բնության և ոգու սուբստանցիան (անփոփոխ էությունը՝ հիմքը) դառնա **առարկա**, պետք է հեռանա մեզնից՝ ստանալով ինչ-որ օտար բանի ձև: Դժբախտ է նա, ում զգացմունքների անմիջական աշխարհն օտարանում է իրենից, քանզի նշանակում է, որ անհատական կապերը, որոնք սրբությամբ միացնում են խելքն ու միտքը կյանքի, հավատի, սիրո և վստահության հետ, քայքայվում են: Տեսական կրթության պայման օտարացման (Entfremdung) համար այդպիսի բարոյական ցավ, հոգեկան տառապանք չի պահանջվում, այլ հուշին, հիշողությանը և մտածողությանը պատկանող ոչ անմիջականով, օտարով զբաղվելու համար ավելի

թեթև փորձություն և պատկերացման ջանք: Բայց զատման այդ պահանջն այնքան անհրաժեշտ է, որ այն արտահայտված է մեզնում որպես համընդհանուր և հայտնի ձգտում: Օտարը, հեռուն կրում են ձգողական հետաքրքրություն, որը մեզ կանչում է գործի և եռանդի. ցանկալին հակադարձ համեմատության մեջ է մեր նկատմամբ ունեցած մերձությունից և նրանից, թե ինչքանով է ընդհանուր: Երիտասարդությունը երջանկություն է համարում տնից հեռանալը և Ռոբինզոնի հետ հեռավոր կղզում ապրելը: Անխուսափելի մոլորություն է առաջին հերթին հեռվի ձևի մեջ խորություն փնտրելը: Բայց և մեր ձեռք բերվող խորությունն ու ուժը կարող են չափվել այն հեռավորությամբ, ինչքան որ դուրս ենք սլացել կենտրոնական կետից, որտեղ սկզբում եղել ենք և ուր կրկին ձգտում ենք:

Եվ ոգու այդ կենտրոնախույս ձգտման վրա է հիմնվում ընդհանրապես նրան իր բնական էությունից և վիճակից զատել տալու անհրաժեշտությունը. առանձնացում, որին էլ նա ձգտում է՝ հեռավոր, օտար աշխարհը բնակեցնելով երիտասարդ ոգում: Բայց այդպիսի անջրպետ, որի օգնությամբ կրթության համար իրականացվում է այդ բաժանումը, ինչի մասին այստեղ խոսվում է, հների աշխարհն ու լեզուն են, իսկ մեզ մեզնից առանձնացնող աշխարհն այդ պարունակում է միաժամանակ բոլոր ելակետային պահերը և մեզ դեպի մեզ տանող վերադարձի թելերը, բայց ոգու իրապես համընդհանուր էության տեսքով:

Եթե այդ համընդհանուր անհրաժեշտությունը, որը մտապատկերների աշխարհը ընդունում է որպես լեզու, որպես այդպիսին՝ ուղղենք վերջինիս (իմա՝ լեզվի - Ա. Տ) ուսումնասիրմանը, ապա ինքնին պարզ է դառնում, որ այդ ուսումնասիրության մեխանիկական կողմը ոչ այլ ինչ է, եթե ոչ պարզապես անխուսափելի չարիք: Քանզի մեխանիկականն անհայտ է ոգուն, որի համար հետաքրքիր է յուրացնել նրա մեջ ամփոփված հում նյութը, իմաստավորել նրանում դեռ չոգիավորվածը և դարձնել այն իրեն հատուկ սեփականությունը:

Լեզվին տիրապետելու այդ մեխանիկական պահի հետ է անմիջականորեն կապված **քերականության ուսումնասիրումը**, որի նշանակությունը դժվար է գերազնահատել, քանզի այն կազմում է տրամաբանական կրթության սկիզբը. դա մի կողմ է, որին դեռ կանդրադառնամ, որովհետև այն, կարծես, համարյա մոռացության է մատնված: Բանն այն է, որ քերականությունը որպես իր բովանդակություն ունի կատեգորիաներ՝ բանականության յուրատիպ արգասիք և սահմանումներ. նրանում, հետևաբար, սկսում է ուսումնասիրվել ինքը՝ բանականությունը: Այդ առավել հոգևոր էությունները, որոնց հետ ծանոթանում ենք առաջին հերթին, ամենաբարձր աստիճանի մատչելի են պատանեկության համար և, ըստ երևույթին, չկա ոչինչ հոգևոր, որ լինի ավելի մատչելի, քան նրանք, քանի որ այդ տարիքի դեռ չզարգացած

ուժերը ի վիճակի չեն ընկալել ոգու ողջ հարստությունն իր բազմազանությամբ: Իսկ քերականական արստրակցիաները (վերացարկումները) բոլորովին պարզ են: Նրանք ասես առանձին տառեր են, այսինքն՝ հոգևորի ձայնավորներ, որոնցից սկսում ենք, որպեսզի վանկեր կազմենք և հետո սովորենք կարդալ: Հետո, քերականությունը դրանց մատուցումը ևս իրականացնում է այդ տարիքի համար մատչելի ձևով, քանի որ սովորեցնում է տարբերել դրանք արտաքին օժանդակ նշանների օգնությամբ, որոնց մեծ մասամբ լեզուն ինքն ունի. որպեսզի հնարավորություն ունենա ավելի լավ, քան ցանկացած ուրիշը, չհենվելով այդ գույների նյութոնյան վարկածի կամ մեկ այլ, սկզբնապես բավարար և չափազանց կարևոր տեսության սահմանումների վրա, որպեսզի ուշադրություն դարձվի այդ տարբերությունների վրա: Քանի որ եթե բանականության սահմանումները (քանի որ մենք մտածող էակներ ենք) **կան մեր մեջ**, և մենք հասկանում ենք դրանք անմիջականորեն, ապա առաջին կրթությունն այն է, որ **ունենանք** նրանց, այսինքն՝ դարձնենք նրանց գիտակցության առարկա և կարողանանք տարբերել հատկանիշներով:

Քանի որ քերականության եզրաբանության օգնությամբ սովորում ենք առաջ ընթանալ վերացարկումներում, և այդ զբաղմունքը կարելի է համարել տարրական իմաստասիրության ուսումնասիրություն, ապա ըստ էության այն ոչ միայն միջոց է, այլ նաև նպատակ ինչպես լատիներենի, այնպես էլ գերմաներենի դասերին: Համընդհանուր, մակերեսային, անլուրջ դատողությունը, որի արմատախիլ անելուն պետք էր վերաբերվել ամենայն լրջությամբ, և որի վտարումը մեր վերապրած ուժեղ ցնցումն էր, աղավաղել է ամենուրեք, այդ թվում՝ և այստեղ, միջոցի հարաբերությունը նպատակին և լեզվի նյութական իմացությունն ավելի բարձր է դասել նրա տիրապետման ինտելեկտուալ կողմից: **Հին** լեզվի քերականության ուսումնասիրումը միաժամանակ ունի այն առավելությունը, որ այն բանականության մշտական և անընդհատ գործունեություն է, քանի որ այստեղ, ի տարբերություն մայրենի լեզվի, որտեղ սովորությունը առանց մտորումների տալիս է բառերի ճիշտ գույակցումներ, անհրաժեշտ է հաշվի առնել խոսքի մասերի՝ բանականությամբ որոշվող որոշակի նշանակությունը և նրանց միացման համար օգնության կոչել կանոնները: Բայց հենց դրանով էլ տեղի է ունենում հատուկի մշտական ենթարկվածությունն ընդհանուրին և ընդհանուրի առանձնացումը, որն էլ հենց բանականության գործունեության ձևն է: Այդպիսով պարզվում է, որ քերականության դասական ուսումնասիրումը կրթության ամենաընդհանուր և ազնվաբարո միջոցներից է:

Այդ բոլորը միասին՝ հների ուսումնասիրումը նրանց ինքնատիպ լեզվով և քերականության պարապմունքները, կազմում են **մեր հաստատությունը բնութագրող սկզբունքի հիմնական գծերը**: Սակայն այդ **կարևոր** արդյունքը, ինչքան էլ հարուստ լինի ինքնին, չի ներառում ողջ ծավալն այն գիտելիքների, որոնք ներարկում է մեր

նախապատրաստական ուսումնական հաստատությունը: Բացի նրանից, որ հին դասականների ընթերցանությունը ընտրվում է այնպես, որ տրամադրվի ուսանելի բովանդակություն, մեր հաստատությունը դասավանդման մեջ ներառում է նաև մի շարք այլ առարկաներ, որոնք ունեն ինքնին արժեք և արժեք իր համար, հատկապես օգտակար են կամ հարստացնում են մարդուն: Այստեղ բավական է միայն անվանել այդ առարկաները. նրանց ծավալի, դասավանդման սկզբունքի, նրանցում և մյուս առարկաների հետ հարաբերություններում առկա հետևողականության, նրանց հետ կապված վարժությունների մասին կարելի է մանրամասնորեն իմանալ տպագիր ձևով տարածվող հաշվետվությունից: Ընդհանրապես այդ առարկաներն են կրոնը, գերմաներենը՝ հայրենական դասականներին ծանոթանալու հետ միասին, թվաբանությունը, ավելի ուշ՝ հանրահաշիվը, երկրաչափությունը, աշխարհագրությունը, պատմությունը, տիեզերագրությունը, բնության պատմությունը և ֆիզիկական ներառող ֆիզիոգրաֆիան, իմաստասիրական ներածությունը, այնուհետև ֆրանսերենը (ապագա աստվածաբանների համար՝ նաև հին հրեերենը), նկարչությունը և գեղագրությունը: ...Եթե չհաշվեն վերջին չորս առարկաները, ապա բոլոր դասարաններում պարապմունքների ժամանակը **հավասարապես** բաժանվում է սկզբում թվարկված առարկաների և հին լեզուների միջև. ժամաքանակի հաշվառման մեջ հիշատակված չորս առարկաների ներառման դեպքում հին լեզուների ուսումնասիրման համար մնում է ուսումնական ժամանակի ընդամենը երկու հինգերորդը:

Այս առաջին, անցած ուսումնական տարում գլխավոր գործն էր աշխատել սկսելու հնարավորություն ստանալը: Երկրորդ ուսումնական տարում կարելի կլինի ավելի հանգամանորեն և շատ զբաղվել առանձին ճյուղերով, որոշարկել և ձևավորել դրանք որպես ուսումնասիրման առարկա, օրինակ՝ ֆիզիկայի տարրական հիմունքները: ...Թերությունների վերացման ճանապարհին են նաև բացթողումները, որոնք վերաբերում են...հաստատությունից դուրս կարգապահական վերահսկողության իրականացմանը (այստեղի բնավորության բնույթը և իրենց երեխաների բարեկրթությամբ ծնողների շահագրգռվածությունը թեթևացնում են այդ հոգսը)....

**Գերագույն** բարեհաճ որոշումների, **Թագավորական գլխավոր կոմիսարիատի** բարեհաճագույն վերահսկողության ու գործունեության ընդհանուր ազդեցությունը, նրանց արժանի՝ ուսուցիչների ջանասիրությունն այս առաջին տարում. այս ամբողջը հանրությունը հնարավորություն ունեցավ գնահատելու բաց քննությունների ժամանակ:

Այս տարին ավարտող վերջին գործողությունը սույն հանդիսությունն է, որով **ամենաողորմած կառավարությունը** իր գործերին հավելում է նաև հարգանքի

պահը և սովորողների հաջողությունների հրապարակային ընդունումը:

Ձեզնից ոմանք, պարոնայք, որպես ամենաողորմած բավարարվածության հավաստիք՝ արդեն ստացել է համալսարան ընդունվելու թույլտվություն. ընդ որում, Դուք տեսաք, որ ակն **կառավարության** նայում է Ձեզ, վստահ եղեք, նա առաջիկայում էլ չի լքի Ձեզ... Ձեզնից շատերն առաջին անգամ են հեռնում հայրական օջախից: Արդեն մեկ անգամ Դուք բաժանվել եք մայրական կրծքից՝ առաջին անգամ կյանք մտնելով, իսկ այդպես էլ այժմ Դուք բաժանվում եք ընտանիքից՝ կատարելով առաջին քայլը ինքնուրույն կյանքում: Պատանեկությունն առաջ է նայում, բայց **մի՛ մոռացեք** նաև ետ նայել, հիշե՛ք Ձեր ծնողների նկատմամբ երախտագիտության, սիրո և պարտականությունների մասին:

Ուսուցիչների կարծիքը յուրաքանչյուր սովորողի մասին կընթերցվի դասարանի բոլոր ուսուցիչների և աշակերտների ներկայությամբ: Այդ գնահատականը ծնողների ցանկությամբ կարող է տրվել գրավոր ձևով: Այդ գնահատականի կարճատև արդյունքը՝ առաջադիմության՝ ուսուցիչների խորհրդակցությամբ որոշված և ռեկտորատի կողմից հաստատված, համապատասխան տեղն է, որը յուրաքանչյուրը գրավում է իր համադասարանցիների մեջ՝ համաձայն յուր հաջողությունների: Այդ տեղերի հերթական համարը վկայությունն է նրա, ինչի ձեզնից յուրաքանչյուրն արդեն հասել է: Այն կհայտարարվի այստեղ հրապարակավ և հետո կտպագրվի: Ավելի հանդիսավոր կլինի նրանց պարգևատրումը, ովքեր առանձնապես աչքի են ընկել իրենց համադասարանցիների մեջ, և այժմ նրանց սպասում է պարգև ու մրցանակ **նորին գերազանցություն պարոն Գլխավոր կոմիսարի** ձեռքից: Ընդունեք այն որպես բավարարվածության նշան նրանով, ինչի Դուք հասել եք այս ժամանակահատվածում, և ավելին՝ որպես խրախուսանք Ձեր ապագա վարքի, որպես պատիվ, որը բաժին է հասել Ձեզ. և, վերջապես, որպես սպասում Ձեր հետագա ջանքերի, որպես ավելի բարձր, Ձեզ ներկայացվող իրավունքները Ձեր ծնողների, Ձեր ուսուցիչների, հայրենիքի և **բարձրագույն կառավարության**:

## 2 սեպտեմբերի, 1813թ.

...Անցած տարին **ուսումնական հաստատության համար** միայն որոշակի ժամանակ է, **ուսուցիչների համար**՝ իրենց գործունեության նոր շրջան, **աշակերտների համար**՝ շարժում առաջ, որն իրենց բարձրացնում է նոր աստիճանի:.....

Ուսումնական հաստատության մեծ երջանկությունն է, որ պատմություն չունի, այլ միայն շարունակվող գոյություն: «Լավագույնը սպանում է լավին» ավետում է

իմաստուն առածը. այն ասում է, որ ձգտումը լավագույնի, երբ այն դառնում է կիրք, զարգացում չի տալիս և բացառում է լավի հասունության հնարավորությունը: Եթե օրենքները և կանոնադրությունները, որոնք պետք է կազմեն փոփոխվողի կայուն հիմքը, իրենք են փոխվում, ապա ինչի՞ն է կառանելու ինքը՝ փոփոխվողը: Իհարկե, ընդհանուր կանոնակարգերը գտնվում են առաջ շարժման իրավիճակում, բայց այդ շարժումը դանդաղ է: ...Նրանց փոփոխությունները բնութագրվում են ոչ մեծ, փոքրաթիվ անցումափուլերով:.... Մեր հաստատությունն անցած տարվա ընթացքում պատմություն չունի. նրա արդեն հայտնի կառուցվածքը, բացառությամբ որոշ ձևական հարցերի ձևակերպումների ճշգրտման, մնացել է նույնը:....

Պատանեկան տարիները հիմնականում առաջընթացի տարիներ են, հետևաբար և գլխավորապես նրանց համար անցած տարին ևս մեկ **նոր** կարևոր **աստիճան** էր: Նրանք, ովքեր արժանի են դրան, անցնում են հաջորդ դասարան՝ ավելի բարդ պարապմունքների, այլ ուսուցիչների: Դա ընդհանուր պարզ է, որին պետք **արժանանալ** ուշադրությամբ և ջանասիրությամբ. այս պահի վրա մի փոքր կանգ կառնեմ: Բանն այն է, որ ոչ միշտ են աշակերտները որոշակի ժամանակի լրումից հետո անխուսափելիորեն փոխադրվում հաջորդ դասարան, ինչպիսին էլ պատկերացնեն իրենք իրենց վարքն ու հաջողությունները: Ուսուցիչները, եթե մտածեին միայն **իրենց մասին**, հաճույքով կազատվեին այդպիսի աշակերտներից, որոնց անուշադրության, ծուլության և այլ թերությունների հետ նրանք պետք է պայքարեին արդեն տարվա ընթացքում: Բայց ավելի բարձր նկատառումները պարտավորեցնում են փոխադրել հաջորդ դասարան միայն ըստ արժանիքների՝ հակառակ նրան, ինչ հաճելի կլիներ իրենց, հակառակ սովորողների և գուցե նաև ծնողների սպասումների: Նրանք, ովքեր սովորում են այստեղ, նվիրում են իրենց գլխավորապես պետական ծառայության: Բաց ուսումնական հաստատությունները գլխավորապես պետական ծառայողների բուժարան են. այդ հաստատությունները պատասխանատու են կառավարության առջև այն բանի համար, որ ավարտեցնում են նրա համար անպետք շրջանավարտների, հավասարապես նաև ծնողների առջև այն բանի համար, որ տալիս են չհիմնավորված հույսեր, որոնք հետագայում միննույն է չեն իրականանում և կարող են միայն հանգեցնել ապարդյուն ծախսերի ու ավելի նպատակահարմար կրթության բաց թողնված հնարավորությունների:

Այնուհետև, ծնողները կհայտնվեին մեծագույն հակասության մեջ, եթե նրանք մի կողմից ցանկանային, իսկ ցանկանում են անկասկած, որ արժանի քահանաները լինեն իրենց խոստովանահայրերը և քարոզիչները, որ դատավճիռ կայացնեին ողջմիտ և արդար դատավորները, որ առողջական վիճակի մասին խորհրդի համար գտնվեին հմուտ բժիշկներ և որ ընդհանրապես իրենց հասարակական բարօրությունը գտնվեր շրջահայաց և արդար մարդկանց ձեռքերում, և եթե մյուս կողմից նրանք

պահանջելին, որ իրենց անունակ զավակները հասնելին այդպիսի պաշտոնների և գործերի ու հետագայում թույլ տրվելին գործունեության:

Այդ ավելի բարձր նպատակը պետք է միշտ աչքի առաջ ունենալ արդեն պետական ուսումնական հաստատություններում, որոնք այդպիսի նշանակման համար նախապատրաստական աստիճաններից մեկն են: Ուսումնական խորհուրդների և ուսուցիչների, ինչպես նաև հավասարապես ծնողների, կամայականությունը հակընդդեմ է այդ ավելի բարձր խնդրին:

Բայց պարտադիր տեղափոխումը հաջորդ դասարան առանց համապատասխան պատրաստվածության ավելի շուտ վնասակար կլինեն նաև անմիջականորեն հենց իրենց՝ աշակերտների համար: Դժվար չէ հասկանալ, որ հենց նրանց սեփական օգտի համար լավ կլինեն, նրանց պատրաստվածությանը համապատասխան, ավելի երկար, քան հնարավոր կլինեն, մնային նույն դասարանում: Քանզի հաջորդ դասարանի պարապմունքներին պատրաստ չլինելով, սկսելով դրանք առանց համապատասխան բազայի՝ նրանք չեն յուրացնի նյութի մեծ մասը, և ավելին, հետագայում ավելի շատ ետ կմնային առաջ շարժվելու փոխարեն: Հակառակ դեպքում նրանք կկարողանային իրական մասնակցություն ունենալ նախկին աստիճանի պարապմունքներին և դրա շնորհիվ ընթանալ առաջ: Նոր համադասարանցիների շրջանում նրանց ավելի բարձր տեղեր գրավելու հնարավորություն տրամադրելը նշանակում է ավելի հոգատար և հաջողությունները խթանող վերաբերմունք, քան թողնել նրանց նախկին, իրենց գերազանցող աշակերտների շրջապատում, որոնց շրջանում միշտ ետնապահ կմնան, որը, հավանաբար, կլինեն ավելի ճնշող իրենց համար: Թող նախկին դասարանում այդ թողնելը նրանց համար խթան լինի ուսման նկատմամբ ավելի մեծ հոգացողության, որպեսզի արդարացնեն իրենց ծնողների հույսերը և վարձահատույց լինեն իրենց ուսուցիչների ջանքերին:

Երկամյա կենումը շատ դասարաններում առանց դրա էլ օրինական է: Մեկ տարվա ուսումնատությամբ փոխադրված լինելը հատուկ պարզն է, իսկ դասարանում մեկ տարի մնալը չի նշանակում մնացականություն:

**Կարևորագույն աստիճանի հասել են նրանք**, ում համար անցած ուսումնական տարին գիմնագիայում ուսանելու **վերջին** տարին էր, և ովքեր այժմ գնում են համալսարան իրենց մերձակա նախասահմանումն իրացնելու համար: Նոր ուղորտում, ուր Դուք, պարոնայք, մտնում եք, կհամոզվեք, թե ինչ արդյունքների են հանգեցրել գիմնագիայում օգտակարությամբ անցկացրած պարապմունքները: Ես համարձակվում եմ հրապարակայնորեն վկայել, որ Դուք ջանասեր էիք ողջ

Ժամանակի ընթացքում և սեփական մղմամբ եք հանձն առել ուսումնական առարկաների ուսումնասիրությունն ու յուրացումը, և այդ իսկ պատճառով են Ձեր ուսուցիչներն իրենց աշխատանքը կատարել ոչ միայն պաշտոնի բերումով, այլ նաև Ձեր ջանասիրության շնորհիվ՝ հաճույքով: Գիմնագիայում Ձեր ձեռք բերած հմտությունները և գիտելիքները, այն առարկաների շրջանակը, որոնցով Դուք զբաղվել եք, միջոց են Ձեր ապագա մասնագիտության համար, բայց ես համարձակվում եմ մտածել, որ այդ առարկաների նկատմամբ հետաքրքրությունը, որին նրանք արժանի են, կայունացել է Ձեզնում որպես այդպիսին: Հարաբերությունը գիմնագիայում ուսումնառության և գիտական մասնագիտության միջև ես ցանկանում եմ բնութագրել մի քանի բառով: Հների ուսումնասիրությունում՝ գիմնագիական ուսուցման այդ հիանալի առարկայում, են գտնվում գիտությունների **հիմունքները և հիմնական պատկերացումները** կամ ընդհանրապես իմացության արժանի գիտելիքները, այդ իսկ պատճառով նրանք այդքան լավ են համապատասխանում գիտելիքների **մասնագիտական ոլորտին նախապատրաստվելու** համար, իսկ եթե նկատի ունենանք գեղեցիկ արվեստները, ապա հները դրանց կատարելությունն են: Ընդհանրապես նրանց յուրօրինակությունը կայանում է նրանում, որ իրենց վերացական խոհածությունները դեռ մոտ են կոնկրետին, որ հասկացությունը ձևավորվում է օրինակից, մարդկային երևույթների պատկերացումներն **ըստ իրենց իրողությունների** կազմում են հիմքը, որը հանդես է գալիս միաժամանակ **հանընդհանուր արդյունքի** հետ: Վերացական միտքն այդ պատճառով ունի կենսական թարմություն, մենք ստանում ենք այն իր նախկինությամբ, որը կապված է անձնական զգացմունքների և հանգամանքների անհատականության հետ, հանգամանքներ, որոնցից այն ծագում է. այդ իսկ պատճառով նա ունի յուրաձև պարզություն և հասկանալի է մեզ:

Կոնկրետի լրիվությունը հատուկ է ինչպես ձևին, այնպես էլ բովանդակությանը, այսինքն՝ բովանդակությունը վերաբերում է մարդկային կյանքին ընդհանրապես և հասարակական կյանքին առավելապես: Այն, ինչ նոր ժամանակների ոգուն համապատասխան սպրդում է մեր մտահայեցությունից և ուշադրությունից. ժողովուրդների կրքերը, գործերը և ջանքերը, վեհ հարաբերությունները, որոնք բաղկացուցիչներն են քաղաքացիական և բարոյական կարգի սերտակցության, որին հենվում է պետության կյանքը, անհատի ինքնագագացումը և գործունեությունը. այդ ամենը կենդանանում է մեր հայացքի առջև: Դասական ժամանակը մնում է ոսկե միջինում ազգի անգիտակից մանկության կոպիտ լավորակության և կրթության նրբին բանականության (որն ամեն ինչ վերլուծել է և ամեն ինչ բովանդակում է առանձնացում) միջև: Այդ վերջին վիճակում ամբողջի ներքին կյանքը վերացական ոգու տեսքով բացակայում է մեր ժամանակների անհատի ուղեղից. ցանկացած անհատ ստանում է միայն մասնակի տարակա ներկայություն նրանում,

սահմանափակ ոլորտ, որից **բարձր** հոգին է, որը հաշվառքի է ենթարկել բոլոր անվակները և յուրահատուկ շարժումներն ու իրականացնում է միասնություն, վերջինները չունեն զգացմունքներ և ամբողջի գործունեության մասին պատկերացումներ:

Նվիրելով մեզ ընդհանրապես որոշակի մասնագիտության՝ մենք հեռանում ենք ամբողջի մասին պատկերացումներից, կապում ենք մեզ սահմանափակ մասի: Պատանեկության իդեալը անսահմանությունն է, իրականությանն անվանարկում են վշտալի անվանելով, քանի որ այն չի համապատասխանում անեզրության իրենց երազանքներին: Բայց գործույթ կյանքը, իրականությունը, բնավորությունն ունեն այն էական պայմանը, որ նրանք հաստատագրվում են որոշակի կետում. «Նա, ով ձգտում է վեհին (առավելագույնին),- ասում է Բանաստեղծը,- պետք է ունակ լինի սահմանափակելու իրեն»: Սակայն մակարդակը, որին մենք մեզ նվիրում ենք մեր ժամանակներում, հների համեմատ քիչ համընդհանուր է: ...Եվ քանզի մենք մարդիկ ենք, բանական էակներ, մեզնում գետեղված անսահմանության հիմքերով և իդեալներով, այդ իսկ պատճառով մեզ համար ավելի կարևոր է ստեղծել և պահպանել մեր էականում լիաբուռն կյանքի հասկացությունն ու գաղափարը: Այդ գաղափարի մեջ մեզ ներառում է առավելապես **դասական հնության ուսումնասիրումը** (studia humaniora). այն տալիս է **մերձակա** պատկերացում ողջ մարդկայինի մասին իր ամբողջականությամբ: Ազատությունը, որն հատուկ էր հին աշխարհի պետություններին, ներքին կապը հասարակական և մասնավոր կյանքերի, հասարակական հայացքների և անհատականության մտածելաձևի միջև իրենց ետևից բերում են այն, որ անհատական հումանիզմի վեհ շահերը....

Ազատությունը, որ հատուկ էր հին աշխարհի պետություններին, հասարակական և մասնավոր կյանքերի, հասարակական հայացքների և անհատականության մտածելակերպի ներքին կապը իրենց ետևից բերում են այն, որ անհատական հումանիզմի վեհ շահերը հասարակական և մասնավոր գործունեության կարևորագույն հենարանները, ժողովուրդներ գահավիժեցնող և բարձրացնող ուժերը ներկայանում են որպես առտնին կյանքի մտքեր (մեր կրթության մեջ այդպիսի մտքերը չեն մտնում կյանքի ու գործունեության շրջանակը), պարզ, բնական հայացքներ սովորական կյանքի առօրյա առարկաներին, այդ իսկ պատճառով հների օրենքները և պարտականությունները պատկերանում են մեզ կենդանի կերպարներով, **բարքերի և սխրագործությունների** ձևով, այլ ոչ թե որպես խոհածություն և հիմնադրությայնություն, որոնց նկատմամբ կողմնորոշվում ենք որպես հեռավոր և մեզ վրա դրված կարգադրագրեր: Համալսարանում սկսվում է հետագա առանձնացումը, ավելի մեծ ուղղվածությունը դեպի առանձին մասնագիտություն: Դե, մի՛ մոռացեք, պարոնայք, գիմնազիայում ստացած գիտելիքները, մասամբ հանուն նրանց օգտակարության՝ որպես միջոց, իսկ մասամբ

Էլ այն բանի համար, որպեսզի մշտապես պահպանեք ձեզնում հիմնական պատկերացումը ազնվաբարո կյանքի մասին և ամնարպնդեք ձեր գիտակցության մեջ մի հիասքանչ անկյուն, ուր Դուք հաճույքով կվերադառնաք իրական կյանքի խզվածությունից, բայց որտեղից Դուք դուրս կգաք առանց հյուժող թախծի, առանց երազկոտության կրավորական անգործության, այլ, ընդհակառակը, ամրացած և թարմ՝ ձեր կոչման իրագործման և ընտրած գործունեության կատարման համար:

Վերջապես մոտենում ենք այս հավաքի հատուկ նպատակին՝ պարզևների (որչափ որ մեզ թույլ է տալիս նրանց նախապես հաստատված թիվը) բաշխում նրանց, ովքեր առանձնապես աչքի են ընկել անցած տարում: Այս պարզևներում և հանձնման հանդիսավորության մեջ մենք միաժամանակ տեսնում ենք թագավորական կառավարության հոգատարությունն ու ուշադրությունը, որոնցով նրանք վերաբերվում են պատանեկության ուսուցմանը, բոլոր միջոցներով աջակցում նրան և խրախուսում հաջողությունները: Լավ դաստիարակության կարևորությունը երբեք այդքան ուժեղ չի զգացվել, ինչքան մեր ժամանակների պայմաններում, երբ հարկ է լինում ցանկացած արտաքին սեփականություն (թեկուզ և լավ գործով ձեռքբերված ու օրինական) համարել անկայուն, իսկ ամենակայունը՝ կասկածելի, սակայն ներքին գանձերը, որ ծնողները լավ դաստիարակության և ուսումնական հաստատությունների օգտագործման ճանապարհով տալիս են երեխաներին, անանց են և բոլոր հանգամանքներում պահպանում են իրենց արժեքը: Դա ամենալավ և հուսալի բարիքն է, որը ծնողները կարող են ձեռք բերել իրենց երեխաների համար և թողնել նրանց որպես ժառանգություն:

Հանձնվող պարզևները և այս հանդիսավոր ակտը թող ծառայեն այս պատանիների ջանասիրության խրախուսմանը, պատանիներ, որոնք դեռ ընդունակ չեն ստույգ չափով գնահատելու կարևորությունն այն գործի, որով զբաղվում են, և կարևորությունը ձեռք բերած գիտելիքների և կրթության: **Ուսուցիչների և ուսումնական խորհուրդների բավարարվածության այս նշաններով, որոնք նրանք** երջանկություն ունեն ստանալու Թագավորական պարոն գլխավոր կոմիսարի բարեգութ ձեռքից, արդեն սկսվում է վարձահատուցումը՝ ի բարո օգտագործված թանկ պատանեկան տարիների համար, հավասարապես և վարձահատուցում նրանց ծնողներին՝ թափած ջանքերի և հոգացողության համար. սա առաջին պարզևն է, և կյանքի ընթացքում թող այն ավելի մեծ և ավելի հարուստ արգասիք բերի:

**Գիմնագիաներում իմաստասիրության դասավանդման մասին**  
*Ջեկոյց թագավորական պրուսական լուսավորության նախարարությանը*  
*(հատվածներ)*

*Նյուրենբերգ, 1816թ. օգոստոսի 2*

Նախ և առաջ համարձակվում եմ ցուցանել, որ գիմնագիաներում այդ թերության վերացմանը ծառայող միջոցառումը կարող է ազդեցություն թողնել միայն նրանց վրա, ովքեր մինչև համալսարան ընդունվելը հաճախել են այդ ուսումնական հաստատությունները: Բայց գոյություն ունեցող օրենքներով համալսարանների ռեկտորատները պարտավոր են համալսարանական ընկերակցություն ընդունել նաև չկրթված և անգիտակ պատանիների, եթե միայն այդպիսիները ներկայացնում են **վկայագիր** իրենց այդ լիակատար տեսության մասին: Համալսարանների նախկին կարգը, երբ ֆակուլտետի դեկանը տվյալ ֆակուլտետ ընդունվել ցանկացողներից քննություն էր ընդունում, ճիշտ է, այլասերվել էր ձևականության, այնուամենայնիվ համալսարաններին հնարավորություն և իրավունք էր թողնում թույլ չտալու ընդունվել բոլորովին չկրթված և տհաս մարդկանց: .... Որպես գիտա-քննական հանձնաժողովի անդամ... ես հնարավորություն ունեի տեսնելու, որ համալսարանում ընդունվելու համար վկայագիր ստացող անձանց տգիտությունը ընդգրկում է բոլոր աստիճանները, և նախապատրաստությունը, որը կարող է կազմակերպվել այդպիսի սուբյեկտների քիչ թե շատ նշանակալից քանակի համար, որոշ դեպքերում պետք է սկսվի մայրենի լեզվի ուղղագրությունից: Միաժամանակ լինելով տեղի համալսարանի պրոֆեսոր՝ համալսարանում սովորողների գիտելիքների ու կրթության այդպիսի անկատարության առկայությամբ կարող եմ միայն երկյուղ կրել ինձ և գործընկերներիս համար, երբ մտածում եմ, որ այդպիսի մարդկանց սովորեցնելը մեր խնդիրն է, և որ մենք պատասխանատվություն ենք կրում այն հաճախակի դեպքերի համար, երբ բարձրագույն կառավարության ծախսերով հետամտվող նպատակին չենք հասնում. նպատակ, որը բաղկացած է ոչ միայն մասնագիտական նեղ նախապատրաստությունից, այլ նաև համալսարան ավարտողների ոգու կրթությունից: Որ համալսարանական կրթության պատիվն ու հարգանքը չեն բազմապատկվում այդպիսի կատարելապես տհաս պատանիների ուսման թույլտվությունից, հավանաբար կարիք չունի հետագա մեկնաբանությունների:

Ես պատիվ կհամարեմ Թագավորական նախարարությանը գիտա-քննական հանձնաժողովում կատարած իմ դիտարկումներն այնուամենայնիվ շարադրելը: Այն է՝ եթե այդպիսի քննությունները նպատակ են հետապնդում նրանց տրված ատեստատի միջոցով համալսարանի համար անբավարար պատրաստված

բոլորին **ցույց տալ** իրենց գիտելիքների մակարդակը և դրանով **խորհուրդ տալ** մի փոքր հետաձգել համալսարան ընդունվելն ու նախապես լրացնել նախապատրաստության բացերը, ապա այդ նպատակին սովորաբար չենք հասնում՝ չէ՞ որ, ինչպես ինձ թվում է, քննվողներին ոչ մի նոր բան չի ասում իրենց չիմացության վավերացումը. նրանք լրիվ գիտակցությամբ այն բանի, որ չգիտեն ո՛չ լատիներեն, ո՛չ հունարեն, ո՛չ մաթեմատիկա, ո՛չ պատմություն, այնուամենայնիվ, համալսարան ընդունվելու վճիռ են կայացնում, և ընդունված որոշման համաձայն ոչ մի այլ բան չեն ցանկանում հանձնաժողովից, բացի աստեստատի օգնությամբ ընդունվելու հնարավորություն ստանալուց: Այդպիսի աստեստատը, հավանաբար, նրանց համար ամենաքիչը համալսարան չընդունվելու խորհուրդ է, չէ որ հենց այդ աստեստատով, անկախ նրա բովանդակությունից, նրանց ձեռքն է տրվում համալսարան մտնելու անհրաժեշտ պայման:

Որպեսզի անցնենք անմիջականորեն Թագավորական նախարարության մատնանշած առարկային՝ **գիմնագիաներում հայեցողական (մտազննական) մտածողությանը նախապատրաստությանը և իմաստասիրության ուսումնասիրությանը**, ես ստիպված եմ որպես ելակետ ընդունել տարբերությունը՝ նյութական և ձևական պատրաստության միջև: Եվ չնայած առաջինն այստեղ ունի ավելի անուղղակի ու հեռավոր առնչություն, ինձ հնարավոր է թվում քննել որպես հայեցողական մտածողության սեփական հիմք, այդ իսկ պատճառով՝ չըրջանցել լրությամբ:

Սակայն քանի որ այդպիսի պատրաստության նյութական կողմը ես կհամարեի ինքնին ուսուցումը գիմնագիայում, ապա ինձ անհրաժեշտ է անվանել այդ առարկաները և հիշատակել նպատակի (որի մասին այստեղ խոսվում է) նկատմամբ նրանց հարաբերության մասին:

**Մեկը առարկաներից**, որոնք ես կցանկանայի թվարկել այստեղ, կլինեի **հների ուսումնասիրությունը**, քանի որ դրա շնորհիվ երիտասարդության մտածողության և պատկերացումների մեջ են ներարկվում անհատների և ժողովուրդների մեծ պատմական ու գեղարվեստական մտածելակերպերը, նրանց արարքները և ճակատագրերը, ինչպես նաև նրանց առաքինությունները, բարոյական սկզբունքները և համոզմունքները: Բայց ոգու և նրա ավելի խորը գործունեության համար դասական գրականությունը միայն այն ժամանակ կարող է դառնալ իրապես արգասաբեր, երբ գիմնագիայի բարձր դասարաններում լեզվի ձևական իմացությունը կդիտարկվի ավելի շուտ որպես միջոց, այն ժամանակ, երբ առաջինը՝ գրականության բովանդակությունը, կդառնա գլխավոր, իսկ այն, որ բանասիրությունում վերաբերում է գիտնականությանը, կմնա համալսարանի և նրանց համար, ովքեր հետագայում

կցանկանան իրենց բանասիրությանը նվիրել:

Մյուս առարկան ոչ միայն ինքնին ունի ճշմարտությունը՝ որպես բովանդակություն, ինչը նաև հետաքրքրություն է ներկայացնում իմաստասիրության համար՝ որպես ճանաչողության ինքնատիպ եղանակ, բայց և միաժամանակ այդ բովանդակություն մեջ ունի անմիջական կապ հայեցողական մտածողության ձևական կողմի հետ: Այդ տեսանկյունից էլ ես կցանկանայի հիշատակել այստեղ **մեր կրոնի դոգմատիկ բովանդակությունը**, քանի որ վերջինը ոչ միայն պարունակում է ճշմարտությունն իրենում և իր համար, այլև այնպիսի հակադրությամբ բովանդակում է այն հայեցողական (սպեկուլյատիվ) մտածողությանը, որ ինքը անմիջապես էլ բերում է իր ետևից ներհակություն բանականությանը և ճնշում է դատողությանը: Այդ բովանդակությունն այդպիսի կողմից կապված կլինի հայեցողական մտածողության նախապատրաստության հետ, կախված է նրանից, թե կրոնի դասավանդման մեջ եկեղեցական դոգմատիկ ուսմունքը շարադրված կլինի արդյոք միայն պատմական զետեղվածքով, ընդ որում ընդհանրապես չի արծարծվի իսկական, խորը ակնածանքը կրոնի նկատմամբ, իսկ ծանրության կենտրոնը կտեղափոխվի դեպի դեիզմի ծեծված ճշմարտությունները, բարոյական ուսմունքները կամ նույնիսկ միայն ենթակայական զգացմունքները: Դասավանդման վերջին եղանակի դեպքում, ընդհակառակը, ավելի շուտ դաստիարակվում են ընդունակություններ, որոնք հակադիր են մտազնական մտածողությանը, դա լրման է հասցնում ինքնահավանությունը և բանականության կամայականությունը, և այդ ժամանակ գիտակցությունը կա՛մ հանգում է պարզ անտարբերության իմաստասիրության նկատմամբ, կա՛մ դառնում է սոփեստության ավարը:

Ե՛վ մեկը, և՛ մյուսը՝ դասական մտածելակերպը և կրոնական ճշմարտությունը, (որքան վերջինը դեռ եկեղեցու հին դոգմատիկ ուսմունքն է) ես այդ պատճառով կհամարեի իմաստասիրական պարապմունքներին նախապատրաստության սուբստանցիական (սուբստանցիա - անփոփոխ էություն. ծանոթություն թարգմանչի) կողմը, այնպես որ եթե պատանու խելքն ու ոգին չեն համակվում նրանցով, ապա համալսարանական ուսուցմանը բաժին կմնա հազիվ թե իրագործելի խնդիր՝ ընդամենը արթնացնել ոգին սուբստանցիալ բովանդակության համար և հաղթահարել արդեն ձևավորված փառասիրությունն ու ուղղվածությունը դեպի սովորական պահանջմունքները, որոնք այդ հանգամանքներում այդպես հեշտությամբ բավարարում են գտնում:

Իմաստասիրության սեփական էությունը հարկ է համարել այն, որ այդ ներքնապես ծանրակշիռ բովանդակությունը ձեռք բերի մտազնական ձև: Բայց ես կարիք չունեմ իմաստասիրության դասավանդումը հանելու գիմնազիայի ուսումնական պլաններից,

թողնելով այն համալսարանների համար, քանի որ Թագավորական նախարարության բարձրագույն շնորհագիրը, որը նախատեսում է այդպիսի բացառումը, ազատում է ինձ դրանից:

Այսպիսով, հատուկ գիմնագիայում ուսուցման համար մնում է **միջին օղակը**, որը պետք է քննել որպես անցում պատկերացումներից և հավատից (այդ ներքնապես ծանրակշիռ բովանդակության վերաբերմամբ) դեպի իմաստասիրական մտածողություն: Այդպիսի միջին օղակը հարկ կլինի տեսնել **ընդհանրական պատկերացումների**, իսկ ավելի ճիշտ՝ խոհական և իմաստասիրական մտածողության համար **ընդհանուր մտքի ձևերի** օգտագործման մեջ: Այդպիսի պարապմունքներն ավելի սերտորեն կապված կլինեն հայեցողական մտածողության հետ մասամբ այն պատճառով, որ վերջինը ենթադրում է իր համար վերացական մտքերում առաջ շարժվելու կարողություն, առանց զգայական նյութի, որը դեռ առկա է մաթեմատիկական բովանդակության մեջ, մասամբ էլ այն պատճառով, որ մտքի ձևերը, որոնց իմացությունը ձեռք կբերվի պարապմունքների ժամանակ, ավելի ուշ կօգտագործվեն հենց իմաստասիրության մեջ, ինչպես նաև կկազմեն իմաստասիրության մեջ վերմշակվող նյութի հիմնական մասը: Բայց հատկապես այդ **ծանոթությունը** և մտքերում ձևականին դիմելու **սովորությունը** հենց այն է, ինչ կարելի է դիտարկել որպես համալսարանում իմաստասիրության ուսումնասիրման համար անմիջական նախապատրաստություն:

Ինչ վերաբերում է գիտելիքների որոշակի շրջանակին, ինչով հարկ կլինեն սահմանափակել ուսուցումը գիմնագիայում, կցանկանայի առաջին հերթին և անվերապահորեն բացառել **իմաստասիրության պատմությունը**, չնայած սկզբնապես այն հաճախ թվում է հարմար գիմնագիայում դասավանդման համար: Եթե չի նախադրվում հայեցողական գաղափար, ապա իմաստասիրության ուսումնասիրումը դառնում է ոչ այլ ինչ, եթե ոչ պատմություն պատահական, անբովանդակ կարծիքների մասին և հեշտությամբ հանգեցնում է բացասական, արհամարհական կարծիքի և հատկապես՝ պատկերացման, իմաստասիրության մասին (երբեմն այդ կցանկանային դիտարկել որպես նրա ուսումնասիրման նպատակ և հանձնարարականներ), որ անօգուտ է ուժեր ծախսել այդ գիտության վրա, և առավել ևս իզուր է սովորող երիտասարդության ուժերը նրա վրա մսխել:

[Ռուսերենից](#) թարգմանեց Աշոտ Տիգրանյանը